

- 10 Մանանայ (1913-1914, երեք հատոր, Պոլիս)
- 11. Արեւ (1908, Եգիպտոս)
- 12. Կառափնատ (1919, շաբաթաթերթ, Պոլիս)
- 13. Իգնատ Աղա (1919, շաբաթաթերթ, 8 թիւ, Պոլիս)
- 4. Շաւիղ-Իգնատ Աղա (1920-1922, շաբաթաթերթ, Պոլիս)
- 15. Հայկ. Սինէմա (1926, շաբաթաթերթ, Աղեքսանդրիա)

ԻՐ ՔՐՈՆԻԿՆԵՐԸ

Օտեանը շատ անգամ իր քրոնիկներուն մէջ է, ինչպէս ինքը կ'ըսէ: Հոն է, որ ցանցնուած է իր ամենօրեայ իւմէօրը: Հազարաւոր սրամիտ էջեր պառկած են այսպէս օրաթերթի հաւաքածուններուն մէջ, ու խնամոտ ձեռքի մը կը սպասեն փունջ կապուելու համար: Թէեւ մեծ մասամբ օրը օրին, հեւիհեւ դրուած նիւթեր, սակայն, չեն պակսիր անոնց մէջ բազմաթիւ գլուխ գործոցներ հեղինակի եւ սրամտութեան:

Պոլսոյ «Հայրենիք»ի մէջ սկսած է նախ իր քրոնիկներուն շարքը «Բերայի մէջ» ու «Շաբաթական Քրոնիկ» խորագիրներուն տակ:

Սահմանադրութենէն յետոյ երբ Պոլիս դարձաւ, «Արեւելք»ի մէջ սկսաւ քրոնիկներու շարք մը, «Աւուր Պատշաճի» վերնագրին տակ, մեծ մասամբ սակայն լուրջ թօնով:

Պահ մը «Ազատամարտ»ի եւ «Հայրենիք»ի մէջ երեւնալէ յետոյ, վերջապէս «Ժամանակ»ի մէջ սկսաւ ու քանի մը տարի շարունակեց ամենօրեայ Տոմսակներու շարք մը՝ որոնց մէջ չպակսեցան բազմաթիւ գեղեցիկները:

Զինադադարին երկու թերթի մէջ միաժամանակ լոյս կ'ընծայէր իր աւօրեայ քրոնիկները, — «Առտուան Տոմսակ»ը «Ճակատամարտ»ի մէջ եւ «Իրիկուան Տոմսակ»ը «Վերջին Լուր»ի մէջ:

Միեւնոյն ատեն, երկուշաբթիէ երկուշաբթի, «Շաւիղ»ի մէջ կուտար տեսակ մը շաբաթական քրոնիկներ Իգնատ Աղայի բերնով: Պուքրէչ, «Նոր Արշալոյս»ի մէջ, Փանթէզիներու շարք մը սկսաւ, դորս շարունակեց սպա Պէյրուի՝ «Նոր Փիւնիկ»ի եւ «Հայ Կեանք»ի մէջ:

Իր վերջին քրոնիկները եղան «Արեւ»ի մէջ հրատարակած «Վերնատունէն» տիտղոսուած Փանթէզիները:

Ինչպէս ըսի, գոհարներ կան այս բոլորին մէջ, ինչպէս անշուշտ կան բոլորովին տափակները, մանաւանդ շրջանի մը, երբ իր սեփական շաբաթաթերթը ունէր, եւ օրական երկու քրոնիկ ալ կը հասցնէր օրաթերթերուն:

Նկատելի է սակայն, որ Օտեան աւելի համով կ'ըլլար ու աւելի իր տաղանդին հարազատ՝ իր սեփական թերթին մէջ, այսինքն իր տունը: Օտար երկնքի տակ կը նեղուէր, ինչպէս դիտել կուտար ինք: Մանաւանդ կուսակցական թերթերու մէջ՝ տարապարհակի պէս կը դրէր, թէ-եւ յաճախ բան մը կը դնէր իրմէ: Վերջին Լուրի մէջ, սակայն, ուր արտայայտուելու համար բարոյական կապանքներ չունէր, աւելի անկեղծ է իր հեղինակը եւ նայուածքը:

ԻՐ ՏԱՐԵՑՈՅՑՆԵՐԸ

Անյաջող բաներ են չորսն ալ, ինչպէս ինքն ալ կը խոստովանէր: Գրուած են աւելի «փողի համար»:

1909ին էր, որ, տարի մը միայն, հրատարակեց «Ոմանց Տարեցոյց»ը, Աղեքսանդրիոյ մէջ:

1912-ին լոյս ընծայեց «Ապուշներու Տարեցոյց»ը, որ նոյնպէս մէկ տարի տեւեց:

Իսկ 1921-ին եւ 1922-ին տպուեցան իր «Երգիծական Տարեցոյց»ները, մեծ մասամբ կազմուած արտասպումներէ:

(Վերջը յաջորդով)